ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

___ « _____ » 2026թ. **N __ -Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 482-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան համայնքում 2026 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» N 482-Ն որոշման 1-ին կետի 9-րդ ենթակետից հետո լրացնել նոր 9.1-ին ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«9.1) Երևանի վարչական տարածքում գտնվող հողամասերի նպատակային և (կամ) գործառնական նշանակության փոփոխության դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար 2026 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում է արտոնություն՝ տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ, եթե նախատեսվում է հողամասի՝ Երևան քաղաքի գլխավոր հատակագծով սահմանված նպատակային և (կամ) գործառնական նշանակությունները համապատասխանեցնել սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականով ամրագրված նպատակային և (կամ) գործառնական նշանակություններին»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 482-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Երևան քաղաքի ավագանու կողմից 10.09.2024 թվականի հ.204-Ն որոշումով հաստատվել է Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը, սակայն ելակետային տվյալների բացակայության (անճշտության) արդյունքում բազմաթիվ իրավունքի պետական գրանցում ստացած գույքեր ներառվել են պետական գրանցման վկայականներին չհամապատասխանող տարբեր նպատակային և (կամ) գործառնական նշանակությունների հողամասերում, ինչի արդյունքում քաղաքաշինական փաստաթղթերի տրամադրման ժամանակ անհրաժեշտություն է առաջանում արդեն իսկ իրավունքի պետական գրանցում ստացած հողամասերի փոփոխության հարցը քննարկել ՀՀ կառավարության 29.12.2011թ. հ.1920-Ն (ներկայումս ՀՀ կառավարության 25.12.2025թ. 1972-Ն) որոշման շրջանակներում և այն համապատասխանեցնել սեփականության իրավունքի պետական գրանցում ստացած վկայականներով ամրագրված հողամասերի նպատակային և (կամ) գործառնական նշանակություններին:

Հաշվի առնելով, որ վերը նշված անհամապատասխանությունների հետ կապված լրացուցիչ բեռ է ավելանում սեփականատերերի նկատմամբ՝ այն է անկախ իրենց կամքից Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող հողամասերի նպատակային և (կամ) գործառնական նշանակությունները փոփոխելու և սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականով ամրագրված նպատակային և (կամ) գործառնական նշանակություններին համապատասխանեցնելու դեպքում փաստաթղթերի նախապատրաստման համար վճարել 2026 թվականի դրույքաչափի նկատմամբ սահմանված վճար, ինչի հետ կապված առաջարկում ենք, նշված պարագայում կիրառել արտոնություն՝ ազատելով քաղաքացիներին վերը նշված խնդիրների հետևանքով առաջացած վճարումներն իրականացնելու պարտավորությունից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ